

նազմական դաշինքի եւ արակցութեան շարժառիթներով եմ քեյադրուած եղել» (էջ 205, ստորագծումները խաչերեանին են)։

Նախ չէ բացատրուած թէ Հայակի- լիկիա ի՞նչ «քաղաքական» հարց կամ կապ կրնար ունեցած ըլլալ Պապական իշխանութեան հետ։ Եթէ ըսել կ'ու- ղուի որ լատին խաչակիրներու եւ Հա- յակիլիկիոյ մէջ ծագած կամ ծագելիք հարցերուն մէջ Պապական «քաղաքական» աջակցութեան ակնկալութիւն ունէին մերոնք, դժբախտաբար ատիկա իրական- նութենէ հեռու է, եւ Հայակիլիկիոյ ե- կեղեցական եւ աշխարհական ղեկավար- ները արդէն քաջ զիտնալու էին թէ այդ ուղղութեամբ բոլոր հարցերուն մէջ Պապական իշխանութիւնները անյայտ ինքնուրուի իրենց լատին դաւանակիցներուն եւ ցեղակիցներուն կողմը պիտի բռնէին։ Գալով «ռազմական» դաշինքի, Հայակի- լիկիոյ եւ Պապական իշխանութեան մի- ջեւ նման բան մը չէին կրնար ակնկալել Հայակիլիկիոյ վարիչները։ Լեւոն Մեծ սկիզբէն իսկ խոստովեցաւ փրկութիւնը Շիկամօրուսին խաչակրութենէն։ Շի- կամօրուսի մահէն ետք, անոր որդւոյն եւ զորաբաժնին՝ դժուարութեամբ ճամ- բայ տուաւ դէպի Անտիոք։ Յետոյ Պա- պերը զինուորական ոյժ մը չէին ներկա- յացներ, որուն վրայ կարենային վստա- հիլ Հայակիլիկիոյ վարիչները։ Պապա- կան ազդեցութիւնը զինուորական շար- ժումներ ստեղծելու կարելութիւն չու- նէր. զինուորական շարժումներն էին որ Պապական իշխանութեան «օրհնութիւնը» կը փնտռէին՝ անգամ մը շարժելէ վերջ։ Հայակիլիկիոյ մերձեցումը առ Պապա- կան իշխանութիւն՝ կու գար յատկապէս տնտեսական կարիքներէ։ Տնտեսական կարիքները երկու տեսակ էին. նախ՝ ուղղակի դրամական ակնկալութիւն, եւ յետոյ, որ ըստ իս ամենակարեւորը, թոյլատրութիւն՝ որ հայ «հերձուածող» նկատուած առեւտրականները ազատ կեր- պով կաթողիկէ երկիրներու մէջ առեւ- տուր ընէին։ Այդ բանին համար Պապա- կան վերին թոյլատրութիւնը ամենակա- բեւորն էր։

Գալով Պապական ցանկութեանց մա- սին խաչերեանի տեսութեան՝ թէ «պա- պական իշխանութեան համար, ընդհա- կառակը, առաջնայինն ու վճռականը դաւանարանականն էր՝ հայ Եկեղեցու բացարձակ հպատակեցումը Հոռմին՝ կա- թոլիկութեան ընդունումով, որպէսզի ամենահեշտ, բայց եւ խարդախ ճանա- պարհով՝ իր գերիշխանութիւնը հաստա- տի Կիլիկեան հայկական թաղաքներու- թեան սահմաններում եւ նրանցից էլ դուրս՝ շատ հեռունները» (էջ 206), ըսենք իսկոյն թէ այս մօտեցումը ճիշտ չէ։ Նախ եւ առաջ Պապական կազմակերպու- թիւնը կրօնական — դաւանական կազմա- կերպութիւն մըն էր, որ իր դաւանանքը տարածելու համար՝ գլխաւորաբար քա- ռողչութեամբ կը զբաղէր։ Այդ քարոզ- չութիւնը, մարդկային բնաւորութեամբ, երբեմն, կը դիմէ զանազան միջոցներու, որոնք ուրիշներու համար կրնան առա- կելի թուել։ Բայց չեմ կարծեր որ Հա- յակիլիկիոյ կամ Հայութիւնը կաթոլի- կացնելը կարծուածին չափ մտասեւեռու- մը եղած ըլլայ Պապականութեան։ Նման բանի մը յաջողութենէն Պապականու- թիւնը իր ցանկացած դերազօրութեան հասած պիտի չնկատէր ինքզինքը, ինչ- պէս որ չյաջողելէն՝ Պապականութիւնը բանով մը չէ տուած։ Բնական է «հա- ւատոյ տարածումը» սկզբնական նպա- տակ մըն էր, որուն գործադրութիւնը Հայոց վրայ, բնական է, ծրագրին մէջ պէտք էր ըլլար։ Մենք բնական կը գտա- նենք որ պապական առաքել ֆրայեր Օ- տտրիքի, Ուիլիամ Ռիւպրիւքի նման ե- կեղեցականներու հետ՝ զրկուած ըլլան նաեւ Բարթոլոմէոս Պոլոնիացիի պէս զուտ դաւանական քարոզիչներ՝ Միտրա- նողաց, Դոմինիկեան եւ այլ կարգերէն։ Եթէ այս շարժումը կարողացաւ Յովհան Գրիգորի մը, Ջաքարիա Ծործորեցիի մը կամ Յովհաննէս Երզնկացիի — Ծործորեցիի մը իրեն չահիլ, նոյն ստեղծ պատճառ ալ եղաւ որ բարձրորակ հայ վանական կըր- թական կեդրոններ՝ ինչպէս Գլաձոր, Ա- ւաղ վանք, Տաթեւ դարձան գիտական լրջութեամբ։ Լատինացումը, ինչպէս գիտենք, չյաջողեցաւ։ Խաթարման հետ-

քը՝ որ մեր նուիրական լեզուին մէջ ե- րեւցաւ, կարելի եղաւ շուտով մաքրել։ Իցիւ թէ հայութեան դարձեալ յաջո- ղուեր մեր աննման հայերէնէն դուրս վտարել «ֆինանսաւորել, տերիտորիալ, տենդենցներ, ուտոպիա, ֆիզիոնոմիա, սոցիալ» եւն... օտարախորթ բառերը, որոնք խաչերեանի նման ընտիր հայա- ղէտի մը զրչէն պէտք էր որ Գլաձորի Համալսարանին նուիրուած դործի մը մէջ երեւնային։

Հազուադէպօրէն, նոյնիսկ սովորա- բար վատորակ թուղթով ու կաղմով հրատարակութիւններու մէջ, այսքան զէչ տպադրուած գիրք ստացած չեմ ե- րեւանէն։ «Լոյս» հրատարակչականը, ըստ երեւոյթի, մրցումի մէջ է նման խորճելի հատոր մը հրատարակ հանե- լու։ Ասոր հետ՝ ծուռ ու նեղ կտրուած լուսանցքներ՝ մեզի մեծ ցաւ կը պատ- ճառեն։ Լ. Գ. Խաչերեանի այս աշխա- տութիւնը արժէքաւոր դործ մըն է, ու դժուար է ըմբռնել թէ ինչու այսպիսի հանգերձանքով ի յայտ կու գայ։

Յ. ԲԻԻՏԵԱՆ

ՍԻՆԵՒԻԲԻ ԺԵՃԸ ԴԱՐԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻԻՐՆԵՐԸ

Գրեց

ՄՈՒՐԱՏ Մ. ՀԱՄԱՐԱԹԵԱՆ

Երեւան, 1973, ՀՍՍՀ ԳԱ հրտ., էջ 190:

Միջնադարեան Հայաստանի ճարտա- րապետութիւնը, ինչպէս յայտնի է, եր- կար տարիներէ ի վեր դրաւած է հետա- խոյգ անձնուր ուղղութիւնը. սակայն ցարդ չունինք ժէ-ժԸ դարերու Հայ ճարտարապետութեան վերաբերող մե- նագրութիւններ։ Հասարակական ներկայ աշխատասիրութիւնը կը ձգտի լրացնե- լու նման մասնակի ուսումնասիրութիւն- ներու կարեւոր բացը։

Հեղինակը գիտականօրէն կը ջանայ լրիւ պատկեր մը տալ Սինեւի Ժէ-ժԸ

դարերուն պատկանող շինարարական կառոյցներուն, ներկայացնելով զանա- զան ընտիր նմոյշներ՝ իրենց ճարտարա- պետական առանձնայատկութիւններով, եւ կը փորձէ վերլուծել այն ալլազան ազդակները՝ որոնք դրդապատճառ են ե- դած ստեղծելու տեղական ինքնուրոյն ճարտարապետական համակառոյցներ, ի- րենց տեղադրական եւ յատկազօդային լուծումներով։ Կրօնական կառոյցներուն առնթիւ, կարեւոր նշանակութիւն ըս- տացած են միաժամանակ ամբողջային (քաղաքական-ազգային) շինութիւննե- րը, իրրեւ բնական հետեւանք՝ Սինեւի լեռնային գիրքին եւ դարաշրջանի քա- ղաքական փոթորիկոտ անցուդարձերուն։

Հասարակական իր այս կարեւոր աշխա- տութիւնը բաժնած է չորս հիմնական գլուխներու։ Ա) Ճարտարապետական ան- սամպլներ (էջ 17-58)։ Բ) Պաշտամուն- քային կառուցումներ (էջ 59-97)։ Գ) Աշխարհիկ կառուցումներ (էջ 98-143)։ Դ) Շինարարական տեխնիկական կոնս- տրուկցիաներ (էջ 144-159)։

Մեր պատմութեան ԺԴ-ԺԵ դարերու քաղաքական իրադարձութիւններուն հե- տեւանքով յառաջացած ազգային կազմա- լուծումած վիճակը, անժխտելիօրէն տը- խուր հետքեր ձգած է Հայաստանի մը- չակութեան, կրթական, ինչպէս նաեւ տնտեսական կեանքին վրայ։ Այս ընդ- հանուր կացութենէն, բնականաբար, չէր կրնար դերձ մնալ նոյն շրջանի շինարա- րութիւնը, հիմնովին ջլատուելով երկրին մէջ ծնունդ առած ճարտարապետական գործունէութեան ուժգին թափը։

Սակայն, շնորհիւ ԺԵ. դարու ընթաց- քին՝ հայ մեկեղութիւններու բազուկով ստեղծուած տանելի պայմաններուն, Ա- րեւելեան Հայաստանի եւ մասնաւորա- պէս Սինեւի նահանգին մէջ, կ'ըսէ Հե- ղինակը, ստեղծուեցան նպաստաւոր պայմաններ՝ վերականգնելու համար կրօնական ու մշակութային կեանքը։ Այս բարեպատեհ առիթով, վերաշինուե- ցան փլատակ վանքերն ու տաճարները, եւ կարճ ժամանակամիջոցի մը մէջ՝ ճարտարապետութիւնը ապրեցաւ իր գե- ղեցիկ զարթոնքը, ստեղծելով ռազմա-

կան նորանոր կառույցներ եւ ճարտարապետական խոշոր համալիրներ:

Հակառակ այդ զարթոնքին, եթէ Հայաստանի ուշ-միջնադարեան շինարուեստը մինչեւ վերջերս անտեսուած է Հայկական ճարտարապետութեան ընդհանուր պատմութեան մէջ, եւ կամ մակերեսային կերպով ուսումնասիրուած միայն, սկզբնապատճառը պէտք է փնտել ասին իրողութեան մէջ, որ այդ շրջանի կառուցումները գուրկ են այն բարձր մակարդակի տուեալներէն՝ որոնք բնորոշիչ ստորոգելներն են եղած Հայ ճարտարապետութեան «հին շրջանին»:

Սակայն, անհրաժեշտ է աչքի առջեւ ունենալ այն շրջանն ալ, շրջան մը որ Հայկական ճարտարապետութեան ընդհանուր պատմութեան կարեւոր մէկ երեսը կը ցուցադրէ, քանի որ ասիկա նորութիւններ կը բերէ անապատային կենանքի (= ճգնաւորական կենանքի) մասնաշատուկ համակառուցներու ստեղծումով, եւ ամբողջային շինութիւններու նոր լուծումներով, պարտադրուած՝ ռազմական գետնի վրայ՝ հրազէնի գործածութենէն:

Հասարակեան իր հատորին մէջ յաջող կերպով ուսումնասիրած է Մեծ Տաթեւի, Ծատին, Հարանց, Ծնհերի կուսանաց, Հալիճորի հանրածանօթ վանքերուն եւ Մեղրիի բերդերուն համալիրները:

Այս տեսանկիւնէն դիտուած՝ Հասարակեանի ուսումնասիրութեան մէջ կարելի է գոյգ առանցքներ նշմարել.

Ա) Անապատային համակառուցներ:

Բ) Ամբոցային շինութիւններ:

Անապատները գոտ կրօնական կենդանութիւններ էին, եւ վանքերէն տարբերելով՝ որոշ առանձնաշատկութիւններ ունէին. նախ՝ շատ աւելի նման էին ճրգնաւորական-հայեցողական կազմակերպութիւններու (իրենց ըմբռնումներով եւ կենցաղով), եւ իբր հետեւանք իրենց այդ ինքնուրոյն ապրելակերպին՝ կը պահանջէին, բնականաբար, ճարտարապետական տարբեր լուծումներ, կը թելադրէին շինարարական յարմար կառուցումներ, ըլլա՛յ յատկապէս այն յը-

ղացումներու, ըլլա՛յ նաեւ ծաւալի եւ տեղադրական գետնի վրայ: Այս բոլորին վրայ եթէ աւելցուի նաեւ աշխարհադրական դիրքերէ բխած ռազմական կամ պաշտպանողական պահանջները, կ'ունենանք արդէն բաւականաչափ՝ չըսելու համար ճոխ տուեալներ, ստեղծելու ճարտարապետական առանձնաշատուկ համակառուցներ:

Այս շրջանի ժամանակ իբրեւ բացառիկ տիպար, Հասարակեան իր հետադրուութեան ընթացքին դուռն է Տաթեւի Մեծ Անապատը (Տաթեւի վանքին մօտակայ), որ իբր յաջողաբար համակառուց՝ այսուհետեւ իր օրինական տեղը կը ստանայ հայկական ճարտարապետութեան պատմութեան մէջ (էջ 19-27):

Աշխարհադրականօրէն՝ Սիւնիք նահանգը կը գտնուի Հայաստանի հարաւարեւելեան ծայրամասին վրայ. օժտուած է լեռնային եւ անառիկ դիրքերով: Այդ իսկ պատճառով, ազգային ազատագրական եռուն պայքարը տեւած է այդ հողամասին վրայ՝ գրեթէ մինչեւ ուշ միջնադար, ուր՝ շնորհիւ Ղարաբաղի եւ Սիւնիքի մելիքութիւններուն՝ ըստեղծուած է նաեւ հայկական անկախ իշխանութիւն մը (Ղափան), երբ Հայաստան կը գտնուէր տակաւին թուրք-պարսկական ահաւոր բռնկումներով: Այս իրադարձութիւններուն իբրեւ հետեւանք պէտք է նկատել ամբողջաշինութեան զարգացումը՝ Սիւնիքի բարձունքներուն վրայ:

Այդ պաշտպանողական կառույցներու ամենանշանաւորն ու ինքնատիպը կը մնայ Մեղրիի բերդը, հիմնովին վերանորոգուած ԺԼ դարու ընթացքին: Այս բերդը ճարտարապետական գետնի վրայ ինքնատիպ է, որովհետեւ իր յատկապէս ծաւալի եւ յատկապէս օգտադրածով եղանակով՝ հիմնովին կը տարբերի միջնադարեան Հայաստանի միւս բոլոր ամրոցներէն, քանի որ 1^օ) «Միակ պաշտպանողական կառուցումն է՝ իրականացուած հրազէնի օգտագործումը հաշուի առնելով», եւ 2^օ) «Տարբերում է միայն իր բոլոր օրինակներէն իր կառուցապատման ստրուկտուրայով

(յօրինուածով). այն՝ կազմուած է առանձին կամգնած աշտարակներից՝ առանց պարսպապատների» (էջ 133):

Մեղրիի բերդին ռազմական կամ պաշտպանողական այս հիմնալի յատկութիւններուն շնորհիւ չէ՞ արդեօք, որ 1723 թուականին, Դաւիթ-բէկի համախոհները, թիւով չորս հարիւր հոգի, հինգ օր անընդհատաբար կը քանդէին թրքական տանեակ հազարաւոր բանակին, մինչեւ հիմնական ուժերու Մեղրի ժամանուի:

Հասարակեան մը պէտք էր, կարծէք, մեր ճարտարապետութեան այս գեղեցիկ նրբերանդները ցուցադրելու համար:

Հասարակեանի անունը կրող այս հատորը, ինչպէս սովորաբար երեւանեան միւս բոլոր հրատարակութիւնները, դժբախտաբար ծանրաբեռնուած է բաւարարող մը՝ որ մեզի համար խորթ պիտի մնայ միշտ: Սակայն կը խոստովանիմ որ Հասարակեանի հատորը ո՛րքան լուրջ, ա՛յնքան ալ հետաքրքրական գըտայ, թէ՛ իր սրբոնականութեամբ եւ թէ՛ յօրինուածքով: Լրջօրէն եւ դիտականօրէն գոհացուցիչ նման հատոր մը, գեղեցիկապէս տպագրութիւն մը կը պահանջէ թէ՛ իր թուղթով, թէ՛ հանդերձանքով եւ թէ՛ լուսանկարներու ընտիր արտատպումով: Հատորին վերջաւորութեան հրատարակուած 32 սեւ-ճերմակ լուսանկարներուն գոնէ կէսը կարելի չէ՞ արդեօք գունաւոր արտատպել, գոհացնելու համար մեր եւ ճարտարագէտներու հետաքրքիր աչքերը:

Փակելէ առաջ մեր տողերը, որոնք Հասարակեանի մեծարժէք գործին աղօտ մէկ պատկերը տուին միայն, չենք ուզեր մոռնալ նշելու՝ թէ հատորը, բացի իր ճարտարապետական ուսումնասիրութենէն, շահեկան է նաեւ անապատային կամ ճգնաւորական կենանքին նուիրուած յարակից մասնակի բաժիններով, մարդ մը՝ որ լրջամիտ Հեղինակին կողմէ արժանացած է յատուկ ուշադրութեան:

Կը շնորհաւորենք Յարգելի Հեղինակը, մաղթելով նորանոր նուաճումներ:

Հ. ՏԱՃԱՏ ԵԱՐՏԸՄԵԱՆ

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՏՊԱՐԱՆՆ

ՈՒ ԻՐ

ՏՊԱԳՐԱԾ ԳՐԻԵՐԸ

(1636 – 1972)

Գրեց

ԼԵՒՈՆ Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Նոր – Զուղա, Տպ. «Ս. Ամենափրկիչ»
վաճի, 1972, էջ 176, 80:

Այս պատուական հատորը ձոնուած է Իրանի եւ բոլոր Միջին Արեւելքի առաջին տպարանի հիմնադիր՝ Պաշտուր Վրդ. Կեսարացիի (1590–1646) անձեռ յիշատակին, եւ լոյս տեսած Իրանի կայսրութեան 2500ամեակի առիթով, մեկնանալով Պր. Սարգիս Մարտիրոսի, ի յիշատակ իր եղբոր՝ Ովկիանոսի:

Յառաջաբանին մէջ, Գրչ. Գարեգին Արքայ. Սարգիսեան, այն ատեն Առաջնորդ Հայոց Իրանա-Հնդկաստանի թեմին, քանդակիչ տողերով կը դնահատէ հատորին բարձրորակ արժէքը եւ անոր բազմադիւն հեղինակին հմտութիւնն ու վաստակը:

Հայկական տպարաններու աւագութեան շարքին մէջ՝ եօթներորդ տեղը կը գրաւէ Նոր – Զուղային՝ Վենետիկէն (1512, 1565), Կ. Պոլսէն (1567), Հոռմէն (1584), Լիվովէն (1616) ու Միլանէն (1621) ետք: Տպագիր առաջին մատենանը, որ մինչեւ 1968՝ «Հարանց վարք» կը կարծուէր, լոյս տեսած 1641ին, նոր պրպտումներու համաձայն՝ «Սաղմոս» մըն է, տպուած 1638ին, որմէ մէկ օրինակ ծանօթ է, Օքսֆորտի Բոդլէյան գրադարանին մէջ պահուած, ու վերջերս միայն յայտնաբերուած (տե՛ս «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 1969, Հոկտ. 18, եւ «Այգ» օրաթերթ, Պէյրութ, 1969, Հոկտ. 18, «Այգ» օրաթերթ, Պէյրութ, 1963, Հոկտ. 23, ինչպէս նաեւ «Ռաֆֆի Տարեգրք», Թեհրան, 1970, Բ. տարի, էջ 301–319):

Պաշտուր Վրդ. Կեսարացի, 1620ի ատենները ստանձնելով Զուղայի թեմի առաջնորդական պաշտօնը, մեծ խանդա-